



OEMME EDIZIONI

## Հերման Վահրամեան ոչ ևս է

ՕԵՄՄԵ ԷԴԻՑԻՈՆԻ հրատարակչատան հիմնադիր և տարիներու խմբագրապետ՝ ճարտարապետ, նկարիչ և քանդակագործ Հերման Վահրամեանը, իր հարազատներէն ու մտերիմ բարեկամներէն ընդ-միշտ հեռացաւ, յետ երկարատև հիւանդութեան, 27 Սեպտեմբերին:

Վահրամեան ծնած է Թեհրան, 29 Նոյեմբեր 1939 թուականին: 1960 թուականին Բուալիա կը փոխադրուի ուր, կարճ ժամանակաշրջանի մը համար Հռոմ ապրելէ եաք Միլանո կը հաստատուի: Կ'աւարտէ նոյն քաղաքի “Փոլիթէքնիք” համալսարանի ճարտարապետութեան մասնաճիւղը և անմիջապէս աշխատանքային ասպարեզ կը նետուի, մասնակցելով առաջին իսկ ճարտարապետական և հետազոտական գիտարշաւներուն, որոնք խումք մը խուլացի և հայ ճարտարապետներու ու հաստատութեանց նախաձեռնութեամբ, 30 տարուայ ընթացքին ի մի կը բերեն հայ միջնադարեան ճարտարապետութեան կոթողներու ամբողջական՝ լուսանկարչական ու չափագրական դիւանային հսկայ նիւթը և ուսումնասիրական բազմալեզու հրատարակութիւններով ու ցուցահանդեսներով, արևմտեան աշխարհին (ոչ միայն) կը ներկայացնեն հայկական ճարտարապետութեան դերը՝ մերձակայ ու միջին արևելքի քրիստոնեայ աշխարհէն ներս: “Documents of Armenian Architecture” մատենաշարը այդ հրատարակչական աշխատանքի ամենացայտուն արդինքներէն մեկն է:

Գիտական բարձրորակ այդ հրատարակչական աշխատանքի գլխաւոր խմբագիր-համադրողը ըլլալէ անկախ, գուգահեռաբար հիմնադիրը կ'ըլլայ “ICOM/Istituo per le culture non dominanti” հաստատութեան և ՕԵՄՄԵ հրատարակչատան, Musicam երաժշտական Մինիխի ձեռնարկին որոնց միջոցաւ, մի քանի խուլացի և հայ մտաւորական բարեկամներու հետ անհամար միջազգային գիտաժողովներ, ցուցահանդեսներ, հրատարակութիւններ, համերգաշարքեր կը կազմակերպէ, նպատակակէտ ունենալով ուսումնասիրել ժամանակակից հայ արուեստն ու ինքնութիւնը, “Մշակութային փոքրամասնութիւն” յղացը, զանազան փոքրամասնութեանց համեմատական պրատումներով, “հայապահպանման” տասնամեակներու զարութային կազմակերպչական աշխատանքի արդիւնքի մասին քննական բանավէճերով, ընկերաբանական և մարդաբանական համեմատական ուսումնասիրութիւններով, ևլն:

90-ական թուականներուն ան հրաժեշտ կ'առնէ հայ մտաւոր աշխարհէն, յետ երկար տարիներու կատարած հայ միջազգային իրականութեան և ինքնա-“հոգեվերլուծական” եզրայանգումին, որ “կտակ”ի ձևով կը յանձնէ Հայաստանաբնակ գրականագիտ և հրապարակագիր՝ Ռուզան Զաքարեանի գրիշին, ամբողջութեամբ նուիրուելով նկարիչ-քանդակագործի, ինչպէս նաև խուլական մամլոյ մասնագիտ թղթակիցի իր բեղուն ասպարեզին:

Հերման Վահրամեանի մտաւորական բազմակողմանի բացառիկ տաղանդ ունեցող տիպարը, իր անձն ու գործը արժանի են լուրջ ուշադրութեան և ուսումնասիրութեան Հայաստանի ու Սփիտքի հաստատութեանց ու մտաւորական աշխարհի կողմէ:

Հերման Վահրամեանի յուղարկաւորութիւնը տեղի կ'ունենայ Միլանոյի Սուրբ Պիոս Ե. Եկեղեցւոյ մէջ, երեքշաբթի՝ 29 սեպտեմբեր 2009 թուականին, ժամը՝ 11.00-ին:

Մեր ցաւակցութիւնները Հերմանի ամոլին՝ Քիարա Նեղրի և զաւկին՝ Փիերո Վահրամեան:

ՕԵՄՄԵ Հրատարակչութիւն

Հայ Մշակութային Ուսումնասիրութեան և Վաւերագրումի Կեղրոն – Վենետիկ

E-mail: oemme.ed@iol.it